ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM
SHARE

*Համարը* N 437-Ն
*Տեսակը* Պաշտոնական
Ինկորպորացիա
*Տիպը* Որոշում
*Կարգավիճակը* Գործում է
*Սկզբնաղբյուրը* ՀՀՊՏ 2006.05.03/25.1
Հոդ.500.21
*Ընդունման վայրը* Երևան
*Ընդունող մարմինը* ՀՀ կառավարություն
*Ընդունման ամսաթիվը* 09.03.2006
*Ստորագրող մարմինը* ՀՀ վարչապետ
*Ստորագրման ամսաթիվը* 10.04.2006
*Վավերացնող մարմինը* ՀՀ Նախագահ
*Վավերացման ամսաթիվը* 12.04.2006
*Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* 04.05.2006
*Ուժը կորցնելու ամսաթիվը*

⊞ Կապեր այլ փաստաթղթերի հետ
⊞ Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՀՈՒՆՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՔԱՐԱՀՈՒՆՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*«Վավերացնում եմ»*
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
*12 ապրիլի 2006 թ.*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 մարտի 2006 թվականի N 437-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՀՈՒՆՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՔԱՐԱՀՈՒՆՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 34-րդ ու 56-րդ, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ, 47-րդ ու 84-րդ և «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածների պահանջներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. ***(կետն ուժը կորցրել է 14.10.10 N 1359-Ն)***

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քարահունջի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող 1077.23 հեկտար հողամասերից 947.33 հեկտարը, որից՝ գյուղատնտեսական նշանակության՝ 894.72 հեկտար, բնակավայրերի հողերի՝ 39.22 հեկտար, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների՝ 9.82 հեկտար, էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների՝ 0.05 հեկտար, հատուկ պահպանվող տարածքների՝ 1.82 հեկտար, ջրային հողերի՝ 1.69 հեկտար, անհատույց սեփականության իրավունքով փոխանցել Քարահունջի գյուղական համայնքին՝ համաձայն NN 3, 4, 5 և 6 հավելվածների:

3. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝

ա) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քարահունջի գյուղական համայնքին անհատույց սեփականության իրավունքով փոխանցվող 947.33 հեկտար հողերից 50.85 հեկտարը մասնավորեցման ենթակա չէ.

բ) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քարահունջի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերից 129.9 հեկտարը համարվում է պետական սեփականություն՝ համաձայն N 7 հավելվածի:

4. Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քարահունջի գյուղական համայնքի հողային ֆոնդի առկայության և բաշխման մասին հաշվետվությունը՝ 2005 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ համաձայն NN 8 և 9 հավելվածների:

5. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահին՝ սահմանված կարգով ապահովել սկզբնական հաշվառման նյութերի տրամադրումը Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քարահունջի գյուղական համայնքի ղեկավարին՝ հողերի ընթացիկ հաշվառումն անցկացնելու և համայնքի հողային հաշվեկշիռը կազմելու համար:

6. Թույլատրել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահին Հայաստանի Հանրապետության պետական գեոդեզիական ցանցի հավասարակշռման արդյունքների հիման վրա Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորների սահմանանիշերի կոորդինատների ժողովածուի հրատարակումից հետո հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման ժամանակ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քարահունջի գյուղական համայնքի հողային հաշվեկշռում սահմանված կարգով կատարել համապատասխան փոփոխություններ:

7. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի N 656 որոշմամբ սահմանված կարգով՝ սկզբնական հաշվառման տվյալների հիման վրա ապահովել մարզի տարածքում ընթացիկ հաշվառման աշխատանքների իրականացումը:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ա. Մարգարյան

2006 թ. ապրիլի 10
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2006 թվականի
մարտի 9-ի N 437-Ն որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՀՈՒՆՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

*(հավելվածն ուժը կորցրել է 14.10.10 N 1359-Ն)*

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2006 թվականի
մարտի 9-ի N 437-Ն որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՀՈՒՆՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

*(հավելվածն ուժը կորցրել է 14.10.10 N 1359-Ն)*

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2006 թվականի
մարտի 9-ի N 437-Ն որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՀՈՒՆՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Մ. Թոփուզյան

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2006 թվականի
մարտի 9-ի N 437-Ն որոշման

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 027-012 | 0.06 | | | | | | | | այլ հողեր |
| 027-023 | 0.02 | | | | | | | | գյուղատնտեսական |
| 027-024 | 0.08 | | | | | | | | ակումբ |
| 027-025 | | | | 0.01 | | | | | հուշարձան |
| 027-050 | 0.01 | | | | | | | | այլ հողեր |
| 027-052 | 0.11 | | | | | | | | այլ հողեր |
| 027 053 | 0.01 | | | | | | | | այլ հողեր |
| 027-054 | 0.20 | | | | | | | | այլ հողեր |
| 027-059 | | | 0.02 | | | | | | կապի հանգույց |
| 027-060 | 0.03 | | | | | | | | բուժ. կետ |
| 027-065 | 0.10 | | | | | | | | այլ հողեր |
| 028-001 | 0.06 | | | | | | | | այլ հողեր |
| 029-006 | 0.01 | | | | | | | | ավտոտնակ |
| 028-007 | 0.01 | | | | | | | | ավտոտնակ |
| 028-014 | 0.03 | | | | | | | | այլ հողեր |
| 029-032 | 0.03 | | | | | | | | այլ հողեր |
| 029-033 | 0.004 | | | | | | | | այլ հողեր |
| 029-034 | 0.01 | | | | | | | | խնամքատարածք |
| 029-036 | 0.03 | | | | | | | | այլ հողեր |
| 029-039 | 0.01 | | | | | | | | այլ հողեր |
| 030-004 | 0.01 | | | | | | | | այլ հողեր |
| 030-021 | 0.01 | | | | | | | | այլ հողեր |
| 030-024 | 0.01 | | | | | | | | այլ հողեր |
| 031-020 | 0.05 | | | | | | | | այլ հողեր |
| 031-021 | 0.01 | | | | | | | | այլ հողեր |
| 032-016 | 0.08 | | | | | | | | այլ հողեր |
| 032-017 | 0.07 | | | | | | | | այլ հողեր |
| 033-009 | 0.07 | | | | | | | | այլ հողեր |
| 033 010 01 | 1.09 | | | | | | | | այլ հողեր |
| 033-010-02 | | 0.02 | | | | | | | արտ. մաս |
| 033-010-03 | | 0.02 | | | | | | | արտ. մաս |
| 033-011 | | 0.01 | | | | | | | արտ. մաս |
| 035-036 | 0.01 | | | | | | | | այլ հողեր |
| 035-047 | 3.2 | | | | | | | | այլ հողեր |
| 035-065 | | 0.03 | | | | | | | արտ. մաս |
| 035-105 | | 0.05 | | | | | | | արտ. մաս |
| 035-190 | 0.18 | | | | | | | | այլ հողեր |
| 035-194 | 0.01 | | | | | | | | այլ հողեր |
| 035-196 | 0.01 | | | | | | | | այլ հողեր |
| 035-197 | 0.02 | | | | | | | | այլ հողեր |
| 035-199 | 0.12 | | | | | | | | այլ հողեր |
| 035-213 | 0.02 | | | | | | | | այլ հողեր |
| 035-218 | 0.13 | | | | | | | | այլ հողեր |
| 035-219 | 0.01 | | | | | | | | այլ հողեր |